



Գերմանիայի
Դաշնային Հանրապետության
դեսպանություն
Երևան

Ընտանիքի վերամիավորում ԳԴՀ տարածքում ապրող ԵՄ կամ ԵՏՏ (Եվրոպական տնտեսական տարածք) քաղաքացիների հետ (ոչ ԳԴՀ քաղաքացիների)

Դիմելու կարգը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է **նախապես հերթագրվել**: Հերթագրվել հնարավոր է **քացառապես առցանց**: Հերթագրման առցանց համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքով՝ www.eriwan.diplo.de

ԳԴՀ տարածքում ապրող ԵՄ կամ ԵՏՏ քաղաքացիների հետ միավորվելու նպատակով տրամադրվող վիզայի համար վճար **չի գանձվում**:

Դիմումի մշակումը, որպես կանոն, տևում է մի 1-2 շաբաթ, սակայն որոշ դեպքերում կարող է ավելի երկար ժամանակ պահանջել:

Ընդհանուր տեղեկություններ

Սույն հուշաթերթիկը նախատեսված չէ ԳԴՀ քաղաքացու հետ միավորվելու համար: Փաստաթղթերը հավաքելիս խնդրում ենք առաջնորդվել համապատասխան հուշաթերթիկներով: Ստորև ներկայացվող տվյալները վերաբերում են նաև գրանցված միասեռ զուգընկերների միավորմանը: Ամուսնու հետ միավորման նպատակով վիզա կարող է տրամադրվել միայն այն դեպքում, եթե երկու ամուսինների 18 տարին էլ լրացել է: ԵՄ կամ ԵՏՏ քաղաքացու հետ ամուսնությունը գրանցելու նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել ամուսնության գրանցելու վերաբերյալ հուշաթերթիկով: Այս դեպքում A1 մակարդակի գերմաներենի իմացության մասին վկայական ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

Դիմումին կից փաստաթղթեր

Դիմումին կից փաստաթղթերը, որոնք ներկայացված են ստորև, պետք է ներկայացնել **անձամբ**: Սկզբունքորեն պետք է ներկայացնել բոլոր փաստաթղթերի **բնօրինակները** երկուական պատճեններով: Եթե փաստաթուղթը գերմաներեն չէ, անհրաժեշտ է կցել գերմաներեն թարգմանությունը: Քաղաքացիական կացության վերաբերյալ արտասահմանյան վկայականները անհրաժեշտության դեպքում պետք է վավերացվեն ապոստիլով կամ լեզալիզացիայով: Քաղաքացիական կացության վերաբերյալ հայկական վկայականները պետք է ներկայացնել ապոստիլով:

Փաստաթղթերը պատուհանի մոտ պետք է հանձնել **երկու նույնանման փաթեթով**՝ նշված հերթականությամբ **դասավորած**: Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) հարմարավետության համար պետք է ներկայացնել A4 ձևաչափով:

Փաստաթղթերը չմիացնել ամրակով, չկարել: Դեսպանություն ուղարկված ֆաքսերը կամ գրությունները չեն կարող կցվել գործերին: Ոչ լիարժեք դիմումներ չեն ընդունվում: Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջելու հավելյալ փաստաթղթեր:

Լիարժեք ներկայացված դիմումը անպայմանորեն չի ենթադրում վիզայի ստացման իրավունք:

Դեսպանությունը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ, համաձայն Կացության մասին օրենքի 82-րդ հոդվածի, յուրաքանչյուր դիմումատու ունի համագործակցության պարտավորություն, և չներկայացված փաստաթղթերի պարագայում դեսպանությունը ենթադրում է, որ հնարավոր չի եղել ապացույց ներկայացնել:

Դիմումի համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.

Երկու լիարժեք լրացած և անձամբ ստորագրած դիմում-հարցաթերթիկ <https://videx-national.diplo.de>

○ 18 տարին չլրացած անձանց դեպքում դիմում-հարցաթերթիկը պետք է ստորագրեն բոլոր խնամակալները:

○ Եթե խնամակալներից որևէ մեկը չի կարող ստորագրել դիմում-հարցաթերթիկը, դիմումի վերաբերյալ իր համաձայնությունը կարող է տալ գրավոր՝ նոտարով վավերացված եղանակով:

○ Այս դեպքում դիմումին պետք է կցել ստորագրելու հնարավորություն չունեցող խնամակալի անձը հաստատող փաստաթղթի անձնական տվյալներով էջի երկուսկան պատճեն (օր.՝ ճամփորդական անձնագիր, անձնագիր):

Երկու անձամբ ստորագրած հայտարարություն՝ համաձայն Կացության մասին օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ պարբերության 8-րդ կետի և 53-րդ հոդվածի (անչափահաս դիմումատուների դեպքում՝ տես վերոնշյալ պայմանները)

Ճամփորդական անձնագիր (լուսանկարով էջի երկու պատճենով)

Ոչ ՀՀ քաղաքացիների դեպքում՝ ՀՀ-ում կացության թույլտվություն

Երկու բիոմետրիկ լուսանկար (կցել դիմումին՝ առանց փակցնելու)

Համատեղ կացության վերաբերյալ ազատ շարադրանքով հրավեր՝ Գերմանիայում բնակվող ԵՄ/ԵՏՏ քաղաքացու, նաև ազատ շարադրանքով հայտարարություն, որ վերջինս ապահովում է Ձեր կենսական կարիքները

Գերմանիայում բնակվող ԵՄ/ԵՏՏ քաղաքացու տեղեկանքը բնակության վայրից

Գերմանիայում բնակվող ԵՄ/ԵՏՏ քաղաքացու ճամփորդական անձնագրի կամ անձնագրի տվյալների էջի երկու պատճեն, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, վերջինիս կացության թույլտվության երկու պատճեն

Գերմանիա միասին վերաբնակության մեկնելու դեպքում՝ վարձակալության մասին պայմանագիրը, սեփականության վկայականը կամ որևէ այլ վկայական՝ ապագա բնակության վայրի հասցեի նշումով

Եթե ԵՄ/ԵՏՏ քաղաքացին աշխատում է, ապա նրա աշխատանքային գործունեությունը հավաստող վկայական (օրինակ՝ գերմանական աշխատանքային պայմանագիր)

Եթե ԵՄ/ԵՏՏ քաղաքացին չի աշխատում, պետք է ներկայացնել

○ կացության բավարար միջոցների վերաբերյալ տեղեկանք, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանությամբ

○ առողջապահական ապահովագրության վկայական

□ եթե Դուք ամուսնացած եք ԵՄ/ԵՏՏ քաղաքացու հետ,

○ ամուսնության վկայական (ուշադրություն. դանիական ամուսնության վկայականը նույնպես պետք է ունենա ապոստիլ)

○ նախկին ամուսնությունների դեպքում՝ բոլոր նախկին ամուսնական վկայականներ, մահվան կամ բաժանության վկայականներ, բաժանության՝ իրավական ուժի վերաբերյալ նշումով վճիռները, անվանափոխության վերաբերյալ տեղեկանքներ

□ եթե Դուք վայրընթաց գծով բարեկամ եք և Ձեր 21 տարին դեռ չի լրացել,

○ ապացույցներ ԵՄ/ԵՏՏ քաղաքացուց սերելու վերաբերյալ՝ վկայականի տեսքով (օրինակ՝ ծնողների կամ ծնողներից մեկի՝ ԵՄ/ԵՏՏ քաղաքացու հետ ամուսնության վկայականը, ծննդյան վկայականը)

□ եթե Դուք վերընթաց կամ վայրընթաց գծով բարեկամ եք, որին հատկացվում է ալիմենտ,

○ ապացույցներ ԵՄ/ԵՏՏ քաղաքացուց սերելու վերաբերյալ՝ վկայականի տեսքով (օր.՝ ծնողների կամ ծնողներից մեկի՝ ԵՄ/ԵՏՏ քաղաքացու հետ ամուսնության վկայականը, ինչպես նաև ծննդյան վկայականը)

○ ապացույց ալիմենտի տրամադրման վերաբերյալ (օր.՝ տեղեկանք ֆինանսական հաստատությունից)

□ ամուսնու/ գրանցված կողակցի կամ երեխայի՝ Գերմանիայի տարածքում բուհական ուսումն ավարտող ԵՄ/ԵՏՏ քաղաքացու հետ միավորման դեպքում՝

○ ապացույցներ ԵՄ/ԵՏՏ քաղաքացուց սերվելու վերաբերյալ՝ վկայականի տեսքով (օր.՝ ամուսնության վկայական, ծննդյան վկայական)

○ ԵՄ/ԵՏՏ քաղաքացու ուսանողական վկայականը

○ ալիմենտի հատկացման վերաբերյալ ապացույց (օր.՝ տեղեկանք ֆինանսական հաստատությունից)

○ կացության բավարար միջոցների վերաբերյալ ապացույց

○ առողջապահական ապահովագրության վկայական

□ անհրաժեշտության դեպքում հավելյալ ապացույցներ և ճամփորդական-առողջապահական ապահովագրություն (դիմումի դրական ընթացքի դեպքում պետք է վիզան ստանալուց առաջ ներկայացնել ապացույց առկա ճամփորդական-առողջապահական ապահովագրության մասին, եթե այն արդեն կանխավ ներկայացված չի եղել):

Խնդրում ենք Ձեր դիմումին կից բոլոր փաստաթղթերը դասավորել վերը նշված հաջորդականությամբ՝ երեք առանձին լիարժեք բաժիններով և դրա համար նախատեսված վանդակում դրական նշանով հաստատեք, որ ներկայացնում եք այնտեղ նշված փաստաթղթերը:

Փաստաթղթերը դասավորեք հետևյալ կերպ.

- 1-ին և 2-րդ նմուշներ. Դիմում-հարցաթերթիկից և հայտարարությունից հետո ներկայացրեք բոլոր մյուս փաստաթղթերի պատճենները՝ վերոնշյալ հերթականությամբ
- 3-րդ նմուշ. բոլոր բնօրինակ փաստաթղթերը՝ թվարկված հաջորդականությամբ

Կարևոր ցուցումներ

- Առանձին դեպքերում դիմումատուից կարող են ընթացքում պահանջվել լրացուցիչ, փաստաթղթեր, որոնք նշված չեն սույն հուշաթերթիկում:
- Ալիմենտի տրամադրման նախապայմանը Աշխատուժի ազատ տեղափոխման օրենքի շրջանակում ենթադրում է ընտանիքի անդամին մատուցվող ծառայություն, որը վերջինիս կողմից օգտագործվում է հիմնական կարիքները ծագման երկրում հոգալու նպատակով: Վիզայի ընթացակարգում անհրաժեշտ է գրավոր ապացույց ներկայացնել ալիմենտի փաստացի հատկացումների վերաբերյալ, օրինակ՝ ֆինանսական հաստատության կողմից տրված տեղեկանքի տեսքով: Ընտանիքի անդամի կամ ԵՄ քաղաքացու սովորական հայտարարությունը, որով, օրինակ, հավաստվում է, որ աջակցությունն իրականացվել է և կշարունակվի տրամադրվել, առանց լրացուցիչ ապացույցի չի կարող բավարար լինել:
- Պարտադիր, հասարակական իրավունքով սահմանված առողջապահական ապահովագրությամբ պաշտպանվածությունը համարվում է լիարժեք, եթե նրա օրինական առողջապահական ապահովագրության ծավալը ներառում է հետևյալ ծառայությունները. բուժական և ատամնաբուժական օգնություն, դեղորայքային, վիրակապային, բուժական և օժանդակ միջոցներ, ստացիոնար բուժում, վերականգնողական բուժական ծառայություններ, հղիության և ծննդալուծման սպասարկում: ԵՄ քաղաքացին և ընտանիքի անդամները պետք է ունենան բուժապահովագրական պաշտպանվածություն, որն ապացուցելի լինի համապատասխան փաստաթղթերով:

Ուշադրություն. հանձնեք պահանջվող փաստաթղթերի լիարժեք փաթեթ: Ոչ լիարժեք դիմումները կարող են հանգեցնել վիզայի դիմումի մերժման:

Սույն հուշաթերթիկը պարբերաբար թարմացվում է, սակայն պահանջվող փաստաթղթերի ցանկը վերջնական չէ: Առանձին դեպքերում կարող են պահանջվել այլ, լրացուցիչ փաստաթղթեր:

Ուշադրություն.

Դեպքումները չի համագործակցում **որևէ ճամփորդական գրասենյակի** հետ: Նույնը վերաբերում է դեպքումների անմիջական հարևանությամբ **ծառայություններ** մատուցող գրասենյակներին: Ճամփորդական և ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումները, թե համագործակցում են դեպքումների հետ, չեն համապատասխանում իրականությանը:

Ձեր դիմումի հաջողությունը կախված չէ **որևէ մեկից**. դիմումների վերաբերյալ որոշում կայացնում է բացառապես գերմանական անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, խաբում են Ձեզ. ոչ մի պարագայում գումար մի վճարեք:**

Վիզաների վերաբերյալ արժանահավատ տեղեկություններ կարող եք ստանալ դեպքումների **վիզայի բաժնի աշխատակիցներից** անվճար հիմունքներով: Տեղեկություններ տրամադրելու իրավունք այլ անձինք չունեն: